ԳԵՆՈՒԱՑԻ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓՈՔՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԺԳ. ԵՒ ԺԴ. ԴԱՐԵՐՈՒՄ։ (Ուրարատ, յունվար)։

Գենուացիների վաճառականութիւնը Կիլիկիայի բոլոր գլխաւոր քաղաքներում էր կատարվում, մինչդեռ Վենետկեցիների վաճառականութեան գլխաւոր կայարանը Լայացցօն էր։ Գենուացիները, Հայերի հետ առաջին դաշնադրութեան ժամանակից ի վեր, այն է 1201 թուականից, տներ և կալուածներ ունենալու իրաւունքը պահանջել են, որոնց նոքա տիրում էին իբրև իւրեանց կատարեալ սեփականութեան։ Լեւոն Բ ոսկեհրովարտակը պայման էր դնում, որ Գենուացիները Սիս քաղաքում մի եկեղեցի, մի պանդոկ (fondouc [21]), մի դատարան, և հասարակապետութեանը պարգևած թագաւորի մի կալուածի վերայ տներ շինելու իրաւունք պիտի ունենային։ Մի քանի տարի յետոյ, Լեւոն, Գենուացիներին տուած նախնի արտօնութիւնները նորոգելով, Տարսօն քաղաքում մի փողոց առ միշտ նոցա ընծայեց այն է հող—եկեղեցի, բաղանիքներ, փուռը կառուցանելու և մի պարտէզ շինելու համար։ 1288 թուականի արտօնութիւնը որ և իցէ կալուածական շնորհումն չէ յիշատակում, և միայն հետևեալ տարին էր որ Բընուա Զաքարիան մի պանդոկի թոյլտուութիւն պահանջեց։ Յայտնի երևումէ, որ Գենուացիները բոլոր Սսի թագաւորութեան մէջ անթիւ սեփականութիւններ ունէին։ Նոցա անունը այնտեղ այնչափ տարածված և մեծարված էր, որ մեր օրերում դեռ ևս, տեղացի մարդիկ միջին դարերի մէջ այնտեղ կառուցված բոլոր պատերազմական շինութիւններին առանց բացառութեան «Ճինիվիզ քալէսի» կամ «Ճինիվիզ ֆաբրիկա» (Գենուացիների բերդ կամ Գենուացիների գործարան) ժողովրդական կոչումն են տալիս։ Գենուացիների Հայաստանում ունեցած այս հզօրութիւնը նոյնպէս ազգային և օտար մատենագիրներից վկայված է։ Էյթօն արքան (Կորիկոսի իշխան Հեթում) հաստատումէ, որ իւր ժամանակից սկսած, ԺԳ. դարի վերջում, Գենուան Վենետկին հակառակումէր նոյն երկրի մէջ, և որ եթէ մրցումը հաւասար էր երկու առևտրական ժողովուրդների մէջ, սակայն Գենուացիների վաճառականութիւնը աւելի տարածված էր Հայաստանում քան թէ Վենետկեցիներինը։ Հարկաւոր է իմանալ, որ Գե-

---

(21) Fondouc կարվանսարայ ասել է, յունարէն պանդոկին բառն է, փոքր ինչ փոխված Արաբացիներից։ Անցեալ համարում 7-երորդ ծանօթութեան մէջ հայ հեղինակների անունները սխալմամբ ֆրանսերէն են տպված, այն է Միքայէլ Ասորի, ժամանակագրութիւն, կայսերական մատենադարի ձեռագիր։ Սմբատ Սպասալար, ժամանակագրութիւն Հայոց։ Կիրակոս Գանձակեցի պատմութիւն Հայոց ձեռագիր։ Զամչեան պատմութիւն Հայոց հատ. Գ. եր. 166։ Նոյնը եղած է 8երորդ ծանօթութեան մէջ, այն է. Նամակ սրբոյն Ներսիսի առ Լեւոն Բ. Գրիգոր Տղայ Կաթողիկոսերկասիրութիւնների մէջ (Վենետիկ 1838) եր. 203. 231։ Սմբատ, ժամանակագրութիւն։ Լեւոն Բի արտօնութիւնների հրովարտակ Ս. Յովհաննէսի ասպետներին. Paoli մէջ։ 13երորդ ծան։ Բազմավէպ, 1347 եր. 92—94։

նուան Կիլիկիայի վաճառականութեան մեծ կարևորութիւն էր տալիս և Սսի դրան հետ լաւ յարաբերութիւններ ունենալու համար ամենայն ջանք էր անում։ Գենուացի դեսպաններ էին արդարև, որոնք Յովհաննէս ԻԲ ի կողմից յանձնարարվեցան, 1320 թուականին, Կիպրոսի և Հայաստանի թագաւորների մէջ ծագած կռուին միջամտելու [22])։

Սակայն Հայաստանի և Գենուայի մէջ մշտական կարծվող համաձայնութիւնը 1268 թուականին մի անակնկալ դիպուածով աղմկեցաւ։ Գենուացի ծովապետ, Լուչետտօ Գրիմալդի, Կոռիկոսում Հայ, Ասորի և ուրիշ վաճառականներին սեփական ապրանքներով բեռնաւորված մի ցռկանաւ, նաւապետի հետ կռիւ ունենալով, բռնութեամբ ցռկանաւին և նորա մէջ պարունակված հարստութիւններին տիրեց։ Կողոպտված վաճառականները Լուչետտօ Գրիմալդիի դէմ գանգատ արին թագաւորի բարձրագոյն դրան, որը, իւրեան յայտարարված թշնամութեան գործողութեան պատճառով, Գենուայի հետ բոլոր յարաբերութիւնները կտրեց, մինչև այն օրը, երբ նա կատարեալ և ամբողջ բաւարարութիւն պիտի ստանար։ Հասարակապետութեան կառավարութիւնը այս եղելութիւնները իմանալով, և նախատեսելով, որ եթէ Հայաստանի թագաւորին հետ պատերազմ սկսէր, Գենուացիների վաճառականութիւնը բոլոր իւր շահերը պիտի կորցնէր, և թէ Վենետիկը իւր ազդեցութիւնը Կիլիկիայում զօրացնելու համար հանգամանքից պիտի շահվէր, լիազօր իրաւունքներ ստացած մի գործակալ ուղարկելու շտապեց, որը նաւեց Լայացցօ գործը կարգաւորելու և վաճառականների վնասները հատուցանելու համար։ Գենուացի գործակալ, Յակոբ Պալլավիչինօ, թագաւորի սպաների և կողոպտված վաճառականների հետ անմիջական յարաբերութիւն անել սկսեց, այս վերջինների վնասը տուժեց, և նոցանից ստացագիր առաւ, և բարեկամութեան ու վաճառականութեան յարաբերութիւնները նորոգեց, որոնք միաւորումէին յառաջագոյն Հայաստանը Գենուայի հետ։

Այն գրութիւնները, որոնք վերաբերվումեն այս եղելութեանը, որ հազիւ թէ չոչնչացրեց Գենուացիների առևտուրը և ազդեցութիւնը Հայաստանի մէջ, Տուրինի բարձրագոյն դրան դիւանում պահված են [23]), և բաղկանում են չորս յիշատակագրերից այն է. 1°. հոկտեմբեր 22, 1268. կողոպտված վաճառականների և Գենուայի հասարակապետութեան մէջ եղած պայմանագրութիւնը, 2°. հոկտեմբեր 3, 1270 հասարակապետութեան կողմից Յակոբ Պալլավիչինօին տուած գործակալութիւնը 3°. հոկտեմբեր 6, 1271. վաճառականների Յակոբ Պալլավիչինօին տուած ստացագիրը, և 4°. հոկտեմբեր 7, 1271. Յակոբ Պալլավիչինօի դատախազների վնասը տուժած եղածն հաստատող յայտարարութիւնը։

---

(22) Raynaldi, Ann. Eccl., T. V. pag. 149, anno 1320, n°. 47,

(23) Genova, Materie politiche, trattati, concessioni, ecc.

Սակայն եթէ Հայաստանը այսպիսի հեշտութեամբ կապած էր պայմանագրութիւն Գենուայի հասարակապետութեան հետ, հարկաւոր չէր կարծել, որ եթէ խնդիրը Գենուայի և Վենետկի մէջ եղած վէճերի մասին լինէր, գործերը այս կերպով կվերջանային։ Այս երկու առևտրական քաղաքների մէջ նախանձից վառված պատերազմները բազմաթիւ և արիւնահեղ են, շատ անգամ պատմութիւնը իւր թերթերում արձանացրած է այս երկու թշնամի նաւատորմիղների մէջ տեղի ունեցած զարհուրելի պատերազմների պատմութիւնները, որը այն ժամանակի բարբարոսութիւնն միայն կարող էր թոյլատրել։ Կորիկոսի տէր Հեթումը, որ աւելի յայտնի է Էյթոն անունով, այն, որ ֆրանսերէն թարգմանեց, հայերէն գրված մի փոքրիկ աշխատութեան մէջ պատմում է [24]), որ Գենուացիները և Վենետկեցիները Կիլիկիայում մշտական մրցման մէջ էին, և թէ 1293 թուականին «Լայացցո խարիսխ ձգած երկու նաւատորմիղների մէջ վէճ ծագելով, մի ամենարիւնահեղ ծովային պատերազմ տեղի ունեցաւ։ Տասներկու Գենուացի ցոկանաւեր երեսուն երկու Վենետկեցի ցոկանաւերի հետ պատերազմեցան, և նոցանից քսան չորս նաւ առան»։

Մենք յառաջագոյն տեսանք, որ Գենուայի և Վենետկի մէջ եղած մրցմունքի պատճառը վաճառականութեան խնդրից էր յառաջանում։ Այժմ տեսնենք թէ Գենուացիների Կիլիկիայում ունեցած վաճառականութիւնը և գործականութիւնը ինչի մէջ էր կայանում։ Հայերի հետ իւրեանց արած յարաբերութիւնների սկզբում Գենուացիները, ինչպէս և Վենետկեցիները արևմուտքի ապրանքները արևելեանների հետ էին փոխանակում։ Որովհետև Վենետիկ, այսպէս ասած, ցամաքի գնով տալով իւր ապրանքները, վաճառականութեան այս ճիւղը բոլորովին ձեռք էր ձգած, Գենուան սահմանափակված էր այն ապրանքներով, որոնց ցուցակը մուծված է 1288 թուի դաշնագրութեան մէջ։ Այն սեփականութիւնների շնորհով, որ Սսում, Տարսոնում և ուրիշ տեղերում ունէին, Գենուացիները վաղուց որթի, ձիթենու, թթենու մշակութեան անձնատուր եղած էին, և այս պարապմունքը նոցա ահագին շահեր էր բերում։ Քաղաքագիտական գրութիւնները մեզ արդարև ցոյց են տալիս, որ իւրեանց Կիլիկիայում հաստատվելու առաջին տարիներից ի վեր, Գենուացիները երկրի մէջ անթիւ սեփականութիւններ ունէին, և թէ նոքա բազմաթիւ էին տէրութեան մէջ։ Մենք արդէն յայտնած ենք, որ նոքա Սսում, Տարսոնում նշանաւոր հաստատութիւններ ունէին, և մենք գիտենք ևս, որ Մօփսիեստում, Լայացցոյում և Կորիկոսում մեծ առևտուր էին անում մանրուքով։ Այս վաճառականութիւնը այնչափ ծաղկած էր անգամ, որ Գենուացի վաճառականները անհրաժեշտ էին հա-

(24) Tables chronolog. á la suite de l'édit. armén. de l'Hist. des Tartares, trad. par J. B. Aucher, pag. 77—86.

մարած տարվան որոշեալ օրերում ընդհանուր օգտի համար Լայացցոյում գտնված մի սակարանի (bourse) մէջ ժողովվելու։ Այնտեղ էին քննվում առևտրական գործերը և դաշնադրութիւնները իրագործվում։ Թէպէտ և Լայացցոն Հայաստանի մէջ մեծ վաճառաշահ քաղաք էր, Էէվանտի հետ ունեցած առևտուրի իշխողն, սակայն Գենուացիները սովորութիւն ունէին բաւական յաճախ Հայաստանի ծովեզրի քիչ յաճախված մի նաւահանգիստը իջնելու, որ կոչվում էր Գենուացիների նաւահանգիստ [25]), և Սատալի ծոցը թափվող մի գետակի բերանում էր շինված։ Եթէ Գենուացիներն իւրեանց նաւերով իջնելու համար այս ափն էին ընտրած, այս մանաւանդ Հայաստանի մաքսատներից ազատվելու և իւրեանց ապրանքները անմիջապէս Փոքր Ասիայի մահմեդական երկիրների մէջ մտցնելու նպատակով էր, որոնց հետ նոյնպէս յարաբերութիւն ունէին։

Հայաստանի թագաւորութեան կործանումից յետոյ, կամ աւելի լաւ ասած ԺԴ. դարի երկրորդ կէսից ի վեր, օտար երկրացիների վաճառականութիւնը Կիլիկիայում մասամբ ոչնչացած էր։ Մահմեդականների հետզհետէ ասպատակութիւնները երկար ժամանակից ի վեր երկիրը աւերած էին, և Գենուացիները Օշինի թագաւորութենից ի վեր Փոքր Ասիայի հետ ունեցած վաճառականութենից հաստատուն շահեր չէին ստանում այլ ևս։ Վիլլանին, որ այս գործը հաստատում է, ասում է որ Իտալացիների վաճառականութիւնը Ասորիքում ԺԴ. դարի առաջին տարիներից յետոյ բոլոր իւր օգուտները կորցրած էր։

Մենք պատեհ ունեցանք նկատելու, որ Հայերի թագաւորների կողմից Գենուացիներին շնորհված արտօնութիւնների մէջ ասված է, որ Գենուացիների մէջ ծագած կռիւները իւրեանց ազգի մարդիկներից բաղկացած դատարանով պիտի դատվին։ Յետոյ հասարակապետութիւնը իւր ժողովուրդները կառավարելու համար այնտեղ հիւպատոսներ ուղարկած էր։ Վենետկեցի հիւպատոսների հաստատվելուց երկար ժամանակ յետոյ միայն Գենուայի հիւպատոսները Հայաստանում պաշտօնավարութեան մէջ մտած են երևում։ Այսպէս, 1271 թուականին էր, որ Գենուացիները Հայաստանում հաւատարմատար ունեցան Յակոբ Պալլավիչինօն։ 1279 թուին Լևոն Նեգրօն հիւպատոս տիտղոսով նորան յաջորդեց [26]), 1288 թուին, Գենուայի հիւպատոսը մեծ արտօնութիւններ ունէր երկրին մէջ, նա ընթերականներ ունէր boni viri, կամ գնահատներ probi viri, և մի դատարանի վերակացու bastonarius: Գենուայի հիւպատոսի իրաւունքները իւր բոլոր ժողովուրդների վերայ էին տարածվում, նա բոլոր հարցերը դատելու իշխանութիւն ունէր, բացի սպանութեան կամ գողութեան դէպքերից։ Նա էր քննում իւր ազգայինների գործերը թագաւորի սպաների հետ և նա էր կատարել տալիս դաշնադրութիւնների պայմանները։

---

(25) Sonuto, Secreta (id. Crucis, liv, II. P. IV. ch. 26· pag. 89·

(26) S. Nicolita, ms. de la bibl. du roi á Turin, pag. 35·

§ II.

Հայաստանի թագաւորութեան հետ Գենուայի հասարակապետութեան արած յարաբերութիւնների վերաբերեալ յիշատակարանները և յօդուածները, ինչպէս որ արդէն ասած ենք իտալական դիւանատներում պահպանված են Պ. ասպետ Մ. Ա. Կաստելլիի հմուտ տնօրէնութեան յանձնըվելով։

Այս յիշատակարանները մեծ մասամբ առանձին յիշատակութեան արժանի են, ուստի օգտակար համարած ենք նոցանից իւրաքանչիւրը առանձին քննելու։ Սկզբում ոսկէհրովարտակները կամ արտօնութիւնները պիտի ուսումնասիրենք և վերջը Կոռիկոսի առաջ ցռկանաւի կողոպտվելուն պատճառով Գենուացիների և Հայերի մէջ պատահած վէճերի վերաբերեալ հրովարտակները։

1201 *թուին մարտին Սսում Լևոն Բ-ի տուած ոսկէհրովարտակը* (*Գենուայի դիւանատներ,* liber Iurium, T. I. f. 231; *ձեռագիրների ծանօթութիւնների և քաղուածների մէջ տպված,* *հ.* XI. *եր.* 19, *Ս. Սաուլի ձեռով,* Historiae patriae monumenta, liber Jurium, T. I. col. 468, n°. 461, *յառաջ բերված հ. Սեմինօ Նիկոլինայի* Mémorie sopra il comm. dei Genovesi *մէջ, արքայական մատենադարանի ձեռագիր Տուրինում եր.* 33)։

Լևոնն այս հրովարտակի մէջ «rex Armeniorum, filius Stephani et de potenti genere Rupinorum.» (Հայերէ Թագաւոր Ստեփանէի որդէ և Ռուբինեաններէ հզօր ցեղէց) *տիտղոս է ընդունում, կայսեր և պապի ձեռով թագաւորութեան աստիճան է բարձրանում, և իւր բարձրագոյն դրան համաձայնութեամբ տնօրինումէ,* assensu curiae regalis (*արքայական խորհուրդի համաձայնութեամբ*)։

1°. *Բոլոր թագաւորութեան մէջ գնալ և գալու, ծախելու և գնելու, նաւահանգիստներ մտնելու և դուրս գալու թոյլտւութիւն,*

2°. *Մաքսատան հարկերի ջնջումը,*

3°. *Խորտակված նաւի մնացորդների հարկի բարձումը,*

4°. *Սսում, Մոպսեստում, Տարսոնում, պանդոկներ, տներ և եկեղեցիներ ելն, շինելու համար գետինների շնորհումը,*

5°. *Վերոյիշեալ քաղաքներում դատարանների հիմնարկութիւնը,*

6°. *Գենուացիների համար եղած պաշտպանութիւն, կողոպտված ապրանքների խուզարկութեան իրաւունքի բարձումը։*

Այս հրովարտակը թագաւորի ձեռով խրուկով յունարէն և հայերէն ստորագրված. Leo (Լևոն) Թագաւոր Հայոց, *տէրութեան ատենադպիր Սսի արքեպիսկոպոս Տրազարկի Աբբա Յովհաննեսի ձեռով խմբագրվեցաւ,* (trium arcuum abbas), *որը վերջը Յովհաննէս Է. անունով մեծափառ կաթողիկոս եղաւ, հրովարտակը ոսկեայ կնքով կնքված է։*

1215 *թուականի մարտին Սսում տրված ոսկէհրովարտակ* (*Տուրինի դիւանատներ,* Genova, materie politiche, 3°. mazzo.—*Գենուայի դիւանատներ,* lib.

Iur. T. I. f. 74 v. հրատարակված Hist. patr. monumentaի մէջ, lib. Iur. T. I. col. 574· n°. 514 — յառաջ բերված Ս. Նիկոլիտայի ձեռով, loc. cit. եր· 35)։

Լևոն այս հրովարտակի մէջ կոչվում «rex Armeniae» (Հայաստանի թագաւոր) և տնօրինում·

1°. Արտօնութիւնների նորոգումը, գենուական դատարանի հիմնարկութիւնը բոլոր գործերը դատելու բացի սպանութեան և գողութեան դէպքերից։

2°. Բոլոր թագաւորութեան մէջ շրջելու և ազատօրէն վաճառականութիւն անելու առանց հարկ հատուցանելու բացի իւր բարօններից կախումն ունեցող տեղերից, որոնց վերայ թագաւորը ոչինչ իրաւունք չունի, որչափ որ նոքա աւատական են։ Հրովարտակը յիշում Ոթոն Տիրերիական բարօնութիւնը, որ Անտիոքի իշխանութեան վասալն էր և Հայաստանի թագաւորութեան աւատական։ Ադամ Գաստիմի տիրոջ, որը Հայաստանի թագաւորութեան և Անտիոքի իշխանութեան սահմաններում կանգնած աւատ էր, և որը Լևոն Բ. տաճարականներից խլած էր։ Վահրամիները, տէրութեան մարաջախտ Կորիկոսի տիրոջ, որ Սելևկիայի և Լամասի մէջ ծովեզրում կառուցված հաստատուն ամրոց էր։ Կապանի Լևոնին, Տօրոսի բերդը, որտեղ Լևոն Զ. Լուսինեան 1375 թուին Եգիպտացիներից գերի բռնվեցաւ։

3°. Տարսոնի մէջ մի փողոցի շնորհումը, այնտեղ ամեն տեսակ շինութիւններ կառուցանելու թոյլտուութեամբ։

Այս հրովարտակը խրուկով ստորագրված և ոսկեայ կնքով կնքված յանձնված է եղել Գենուացիներին։

Լևոն Գ-ի կողմանէ 1288 թուին, դեկտեմբեր 23-ին տրված արտօնութիւնը (Գենուայի դիւանատներ։ lib. Iurium, T. I. f. 234· — Տուրինի դիւանատներ։ Genovae, materie politiche.— Ս. Մարտինից հրատարակված։ Ձեռագրերի ծանօթութիւնների և քաղուածների մէջ (Notices extr. des mss., T. XI. եր· 97)։ Վենետկի Ս. Ղազարի Մխիթարեանների ձեռով։ in 4°., Hist. pat. monumenta-ի մէջ։ lib. Iurium.

Լևոն Գ-ի ձեռով ստորագրված այս յօդուածը, որի հայերէն սկզբնագիրը Տուրինի դիւանում պահպանված է։ Գենուացի ատենադպիրների ձեռով լատիներէն թարգմանված է և հայերէն մուծված է liber Jurium գրքի մէջ։ Լևոն Գ. «ամենայն Հայերի թագաւոր» է անուանվում։ և ազդարարում·

1°. Համեմատական հարկերը ջնջված են յօգուտ Գենուացիների։ բայց հաստատուն հարկերը որոշված են հրովարտակի մէջ եղած սակագրի համեմատ։

2°. Իրերը նայելու իրաւունքի հարկը վերցված է։

3°. Գենուացի հիւպատոսը (քունց) իւր ազգայիններ ազգութիւնը պիտի ճշգրտէ և թագաւորի սպաների առաջ պիտի վկայէ։

4°. Առանց կտակի վախճանող Գենուացու ինչքը իր ազգայիններին պիտի տրվին.

5° Գուգլաց կըծի (գուգլաց պօղաղ) հարկերը որոշեալ կերպով պիտի հաստատվին, հրովարտակի մէջ ասվածին համեմատ.

6°. Գենուացու կալուածները, որոնք իր հայ կնոջ իրաւունքներով ձեռք են բերված, տէրութեան պիտի վերադառնան, եթէ նա առանց կտակի կամ առանց ժառանգների մեռնի.

Լատինական բնագիրը ունի բացի սորանից մի ծանօթութիւն, որը ցոյց է տալիս այս հրովարտակի նշանակութիւնը Օշին Պրօքսիմոսի (proximos) այսինքն թագաւորի գանձապետի համար և Բակուրան և Պետրոս բարոններին համար, որ Լայացցօյի նաւահանգստի նաւապետ, սենեկապետ և քարտուղար էր. Թագաւորը հայերէն ստորագրած է. Լեւոն Թագաւոր Հայոց.

Հեթում Բին ներկայացրած արտօնութիւնների խնդրագիրը Գենուացիներին կողմից 1289 թուին. (Կաֆֆարօ, Annales génoises, liv. X. Muratoriի մէջ, Rer. ital. scr. T. VI. col. 596).

1°. Պանդոկի թոյլտուութիւն.

2°. Գենուացիների ապրանքները Հայերի տէրութենից մահմետական երկիրներ (Թիւրքիա) տեղափոխելու հարկերի բարձումը.

Կորիկոսի առաջ ցուկանաւի կողոպտվելուն վերաբերեալ յօդուածները. 1268—1271 թուականը.

Գենուայում վաւերացրած պայմանագրութիւնը (հոկտեմ. 22. 1268) Կորիկոսի առաջ փնասված վաճառականների և որոնց մէջ գտնվումեն Տիւրոսի իշխանի, Թաթարների խանի, Անտիոքի պատրիարքի և իշխանի հպատակ Ասորիները, Հայաստանի թագաւորի հպատակների, որոնք հրաժարվումեն իրեանց հատուածատարների ձեռով որևիցէ փնասների պահանջ յարուցանելուց Գենուայի դէմ, որը յանձն է առնում հատուցանել նոցա 14900 գենուական լիվըր փողը անմիջապէս, երբ ներկայ պայմանագրութիւնը հաստատված կլինի այն իշխաններով, որոնցից այս գործի մէջ մասնակցողները կախումն ունին. Այս մասնակցողների մէջ գտնվումեն.

Եսպօլէզ Պոլինգերի որդի, Դամասկոսից. Տիւրոսի տիրոջ հպատակ. Միւզօք, մահմետական, Ակրայից. Սալիպ Ակրայից. Ազիզ Ադալարի որդի. Ջեզայիր Ակրայից. Բէլֆէք, Սելիմի որդի, թաթարների խանի հպատակ. Ֆելիք Օրէսեան, Ակրայից. Սողոմոն Կազիմ, Ակրայից. Սողոմոն Րասսինի որդի, Դամասկոսից, Ակրայի բնակիչ. Բօզալէր, Բէլֆէքի որդի, Դամասկոսից, Տիւրոսի իշխանի հպատակ. Մօնսօր Արամեան, Սսի թագաւորի հպատակ, Լայացցօյի բնակիչ. Վասակ, Վահրամ, Բարսօմ Միքայէլ Մաշըրօտ, Դաւիթ և Յովսէփ, Ազիզ և Միւսախտ Այասից, Սսի թագաւորի մարդիկը. Յովհաննէս Բարսոմ, Անտիոքի պատրիարքի մարդ.

Մասամբ աղաւաղված այս բոլոր անուններն այնու ամենայնիւ ցոյց են տալիս իրեանց մահմետական, հրեայ և քրիստոնեայ ծագումը. Arch. de

Turin. Genova, mat. polit. mazzo 2°. — publié par Mas—Latrie, Hist. de Chypre. docum. T. I. pag. 74).

1270 Թ. Հոկտեմբեր 3ին Յակոբ Պալլավիչինօյի գործակալութիւնը, որոշելու համար Հայերի հետ ցականալի աւարառութեան ժամանակ կողոպտված վաճառականներին հատուցանելի վնասները (Տուրինի արքայական մատենադարան, Ս. Նիկոլիտա op. cit. եր. 37).

1271 Թ. Հոկտեմբեր 6ին, վաճառականների ստացագիրը, որոնք խոստովանումէին Գենուացիներից բաւարարութիւն ստացած լինելը (Տուրինի դիւանատներ, L. cit. mazzo 2°. - publié par Mas — Latrie, L. cit. pag. 78; par S. Nicolita, pag. 38; et rapporté par Canale, Storia civile dei Genovesi, T. II. partie XI. ch. 16. pag. 732).

Այս հրովարտակի մէջ գրկված վաճառականները յիշվումեն, որոնց անունները հետաքրքիր առանձնութիւններ են ներկայացնում.

Աննա Բուէմրս Գավէմ: Բօլէզ Գիլատ, այս խօսքը արաբերէն փէլլահ — երկրագործ է. Ազիզ: Բօյֆէտ: Սալիբա, արաբերէն սալի — բէյ. Մանչօր, Վասակ. Դաւիդ, արաբերէն Դաուդ, Դաւիթ. Բարսօմայ, Վահրամ Փատրաս, Միքայէլ Մաթիաս, Յովսէփ ալտուս Բօչէտ, Նիկիֆօր, Ստեփան Ակիմ, բոլորը Ասորիներ և Հայեր են. Սօլիման Բէնէրադիմ Արզ էլ Ազիզ — մահմետականներ. Այս հրովարտակը Լայացցօյում խմբագրվեցաւ, Թագաւորի դրան առաջ, որ Թագաւորութեան երկրորդ դուռն էր, (curia ducalis et baïlia regis).

1271 Թ. Հոկտեմբեր 7ին Յակոբ Պալլավիչինօյի յայտարարութիւնը, որ ճշգրտումէ Կարիկոսի առաջ կողոպտված վաճառականների վնասները կատարելապէս հատուցած լինելը (Տուրինի դիւանատներ, Genova, Exp. orig., mazzo 5°, Canale էջ յառաջ բերված, op. cit ., T. II. fasc. VI, pag. 731).

Այս հրովարտակը Գենուացիների լեզուով խմբագրվեցաւ Լայացցօյում Գենուացիների սակարանի մէջ.

Սոքա են համառօտապէս Գենուայի Հայաստանի հետ ունեցած յարաբերութիւններին վերաբերեալ հատուածների մէջ պարունակված տեղեկութիւնները. Երևումէ որ Գենուան, Կիլիկիայի հետ բաւական ընդարձակ վաճառականութիւն անելով հանդերձ, չէր համարում այս կողմը իբրև արևելքի գլխաւոր տիրապետող տեղ և թէ իր առևտրական նաւերը դէպի սև ծով ուղղեց, որտեղ այնքան երկար իշխեց, և Վենետիկի սև ծովի նաւահանգիստների մէջ ունեցած զօրութիւնը կործանեց, հաշուէտներ և նոյն իսկ քաղաքներ հիմնելով, որոնք մինչև այժմ դեռ ևս պահպանումեն Գենուացիների ներկայութեան յիշատակը, և այն փայլի յիշատակը, որ նոցա ներկայութիւնը այս երբեմն ծաղկած երկիրների վերայ ձգեց.

(Ֆրանսերէնից) Ճեմ. Ն. Գառ. աշ. Յ. Պ.